600.0210.13.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2016 թվականի №210Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի №337Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հունիսի 20-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №337Ա որոշմամբ «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիայով (այսուհետ՝ №0513 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ №0513 լիցենզիայի պայմանների 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2016 թվականի հուլիսի 14-ը» բառերը փոխարինելով «մինչև 2017 թվականի հունիսի 14-ը» բառերով:

2. «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0513 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Շենիկ» փոքր

հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N2296 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ գումարից յոթ հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2017 թվականի հուլիսի 29-ը գործողության ժամկետով:

3. «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 հուլիսի 2016թ.